

**Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական
ուղերձը Ուսուցչի տոնի առթիվ**



Սիրելի ուսուցիչներ,

Շնորհավորում եմ ձեզ Ուսուցչի տոնի կապակցությամբ:

Շարունակելով կրթության ոլորտի ազգային ավանդույթները՝ դուք ամենօրյա գնահատելի աշխատանքով ձեր լուսն էք ներդնում մեր կրթության ու մատաղ սերնդի զարգացման գործում: Անմնացորդ նվիրում և անսպառ ջանք պահանջող նվիրական առաքելության ընթացքում դուք միշտ եղել եք կրթության ջահակիրները:

Հավատացած եմ, որ ձեր ավանդով ու հայրենասիրության ոգով դաստիարակված սերնդի շնորհիվ մենք ապագայում կառուցելու ենք էլ ավելի հզոր, զարգացած ու աշխարհին իր կրթական ներուժով հայտնի պետություն:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ Ուսուցչի տոնի կապակցությամբ և մաղթում երկար տարիների կյանք, անսպառ եռանդ ու տոկունություն:

Արամայիս Գրիգորյան

ՀՀ Արարատի մարզպետ